Արձանագրություն N 4

«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքների թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «28» «օգոստոսի» 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Սարգիս Հովհաննիսյան
անդամներ՝	
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Էդուարդ Ջանջուղազյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արեգ Եղիյան
քարտուղար՝	
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Անի Բազեյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 31-ից օգոստոսի 28-ը, ՀՏՁՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ հասցեում:

Նիստը նախագահում էր Սարգիս Հովհաննիսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին
2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին

3. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Կողմ՝ 4, դեմ՝ 0

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ

□ ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

□ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է եզրակացություն:

□ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ -ի կողմից ներկայացված

- նախկինում կատարված ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-04/17-3 և ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3 պայմանագրերում բացակայում են ծավալաթերթ-նախահաշիվները:
- 2016-2018 թվականների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 166,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից, իսկ պարտավորությունների հանրագումարը գերազանցում է ակտիվների հանրագումարը:

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել:
2. Ծանուցել ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ին երեք աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:
3. Նիստը շարունակել շտկված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից գնահատող հանձնաժողովին հանձնելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

□ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը□

□ համաձայն ներկայացված «ՀԱՇՎԱՐԿ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ» փաստաթղթի, որը ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ–ի կողմից ներկայացվել է առանց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հաստատման՝ 2016-2018 թվականների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 182,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

□ ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների գումարը չի բավարարում հրավերով սահմանված պահանջին, և անհրաժեշտ է ներկայացնել էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույնը 15,350,116 (տասնհինգ միլիոն երեք հարյուր հիսուն հազար հարյուր տասնվեց) ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր□

□ ներկայացած նախկինում կատարված պայմանագրերով ներկայացված աշխատանքներում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների հանրագումարը չի բավարարում հրավերով սահմանված պահանջներին, և անհրաժեշտ է ներկայացնել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույնը 53,107,154 (հիսուներեք միլիոն հարյուր յոթ հազար հարյուր հիսունչորս) ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր:

Որոշվեց՝

4. Ծանուցել մասնակցին ներկայացնել լրացուցիչ պայմանագրերը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Նիստը կասեցնել:

6. ՀՀ ՊԵԿ ուղարկել գրություն՝ մասնակցի կողմից ճշգրտված համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

7. Նիստը շարունակել ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված գրությունը Պատվիրատուի մոտ մուտք լինելու օրը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ստացվել է պատասխան գրություն:
- ՀՀ ՊԵԿ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 22-ին ստացվել է պատասխան, համաձայն որի ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմում է 182,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Որոշվեց՝

8. ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել:

9. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետի՝ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

10. ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից ՎԱՆԻ ՍՊԸ-ի ֆինանսական չափորոշիչի վերաբերյալ պահանջվող եզրակացությունը ստանալու վերաբերյալ:

11. Ծանուցել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից Վանի ՍՊԸ-ին 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՎԱՆԻ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:
- ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է եզրակացություն:
- ՎԱՆԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված
  - աշխատանքային ռեսուրսներում գլխավոր ինժենների որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
  - տեխնիկական միջոցներում ավտոինքնաթափի և բեռնատարի քանակները չեն համապատասխանում հրավերով սահմանված քանակներին, ինչպես նաև ներկայացված չեն էքսկավատորի, թրթռագլդոնի և պնևմոգլդոնի տեխնիկական անձնագրերն ու սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Որոշվեց՝

12. Նիստը կասեցնել:

13. Ծանուցել ՎԱՆԻ ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

14. Նիստը շարունակել շտկված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից գնահատող հանձնաժողովին հանձնելու օրը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

□ ՎԱՆԻ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկված փաստաթղթերը:

Որոշվեց՝

15. ՎԱՆԻ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

16. Հաստատել ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի բոլոր մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/հ	Մասնակիցի անվանումը	Գնահատականը
1	Ջերմուկշին ՓԲԸ	Անբավարար
2	ՎԱՆԻ ՍՊԸ	Բավարար
3	Հարսնաձոր ՍՊԸ	Բավարար
4	ՄԱՎՇԻՆ ՍՊԸ	Բավարար
5	«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիում	Բավարար

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 48-րդ կետի՝

Որոշվեց՝

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ ՎԱՆԻ ՍՊԸ-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Որոշվեց՝

1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

2 ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Սարգիս Հովհաննիսյան

անդամներ՝

Էդուարդ Ջանջուղազյան

Արթուր Սողոմոնյան

Արեգ Եղիյան

քարտուղար՝

Անի Բազեյան